ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/31, 14.04.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» գնանշման հարցում

Գնման առարկան՝ հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցնել, քարտուղարին փոխել արձանագրությունները, պայմանագիր կնքելու առաջարկը, քանի որ համապատասխան ժամկետներում չի կատարել իր պարտավորությունները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոքը ներկայացրած անձ՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի

Լիազորված անձ՝ Թորոս Տարախչյան

Հասցե՝ ք. Երևան, Կողբացի 28/72

Էլ. փոստ՝ Tendersproftest@gmail.com , ProftestLLC@gmail.com:

Հեռ.՝+374 55 09 58 58, +374 93 14 55 96

Պատվիրատու՝ «Ջարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Հասցե՝ ք. Արմավիր, Շահումյան 3

Հեռ.՝ 093-08-10-18

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ՋՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21

Ջրի մաքրման սարքավորումներ

Բողոք

Բողոքի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

Բողոքի առարկա է հանդիսանում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կայացված որոշումները:

բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

Հայտերը գնահատման ժամանակ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1 կետը : Աքվա Ստանդարտ ՍՊԸ ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես՝

- Պահանջվում էր՝ Նվազագույն արտադրողականություն՝ ոչ պակաս քան 600 լ/ժամ՝ մուտքային ջրի 10oC-ի ջերմաստիճանի դեպքում

  Ներկայացվել էր՝ Հակադարձ օսմոսային համակարգ, ՌՕ – 1000լ/ժ արտադրողականությամբ

  Անհամապատասխանություն՝ նշված չէ, թե որ ջերմաստիճանի դեպքում, քանի որ RO-ի արտադրաղականությունը մեծ կախման մեջ է ջերմաստիճանից: Ջերմաստիճանի մեծացման դեպքում մեծանում է իսկ իջեցման դպքում փոքրանում:

- Պահանջվող ավտոմատ ֆիլտրերի փոխարեն ներկայացված է ֆիլտր, ինչը չի համապատասխանում պահանջին

- Առկա չէ պահանջով ներկայացված Ջրի զտման (աղահեռացում) ՌՕ համակարգ-ը

- Առկա չէ ջրատարի (водяная петля) մանրէազերծման համար նախատեսված սարքն կամ համակարգ մանրէազրծման համար՝ հանալրված բազային ռեակտիվներով

- Տեխնիկական պահանջով պետք էր ներկայացվեր կամ PEX կամ PVC-U խողովակները (ՁՄԿ արտադրողի կողմից գրավոր հաստատումով): կազմակերպությունը ներկայացրել է PVC տիպի խողովակներ, որոնք նույնպես չեն համապատասխանում պահանջին:

- Բավակայում են մրցույթով նախատեսված որակի վկայականները

- Առկա չէ կամ պատշաճ չի նրկայցված ՝ Խողովակաշարը նեռարյալ բոլոր միացումները և ջրահեռացման համակարգը պետք է պաշտոնապես (գրավոր) համաձայնեցվեն ՌՕ-ի կամ ՁՄԿ-ի արտադրողի հետ:

- Լիովին բացակայում են հետևյալ պահանջների՝
    - Ռեվերս օսմոսի (ՌՕ) կառավարման միկրոպրոցեսորային համակարգի առկայություն:
    - Մաքրված ջրի հաղորդունակությունը համաձայն ԳՕՍՏ Ռ 52556 կամ AAMI:
    - Ջերմաստիճանի ցուցադրման (դիսպլեյի) առկայություն:
    - Հաղորդունակության չափիչի, ճնշման չափիչի և հոսքի ինդիկատորի առկայություն:
    - Համակարգը պետք է լինի ամբողջությամբ ավտոմատացված:

Հանձնախմբոդովը հաշվի չի առել վերը նշված պահանջները և հայտը համարել է բավարար խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2 կետը:

<u>Պահանջ:</u> Հաշվի առնելով վերը շարադրվածը կից ներկայացնում ենք արձանագրությունները և Աքվա Ստանդարտ ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտի փաթեթը:

Խնդրում ենք պարտավորեցնել ՀՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21 ծածկագրով գնման ընթացակարգ կասեցնել , քարտուղարին փոխել արձանագրությունները, պայմանագիր կնքելու առաջարկը, քանի որ համապատասխան ժամկետներում հանձնաժողովը չի կատարել իր պարտավորությունները:

<<Պրոֆտեստ>> ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր 41փ. 12/3,

հեռ 055-095858, tendersproftestllc@gmail.com

<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

Հ/Հ 220290123490000

ՀՎՀՀ 00120301

Լիազորված անձ՝ Թորոս Տարախչյան

TARAKHCHYAN TOROS 2411920369

Digitally signed by TARAKHCHYAN TOROS 2411920369
Date: 2021.04.14 14:13:22 +04'00'